«Հաստատում եմ»
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի տնօրեն, պատմական
գիտությունների թեկնածու
Ա. Ա. Բոբոխյան

ԿԱՐԾԻՔ

Մարինա Կարենի Գալստյանի «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան Հայաստանում» ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության մասին

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի 2024 թվականի սեպտեմբերի 9-ին կայացած նիստում (արձանագրություն N 6):

Ղարաբաղյան 44-օրյա պատերազմը իր ազդեցությունը թողեց հայաստանյան հասարակական կյանքի, ինստիտուտների, մարդկային փոխհարաբերությունների, սոցիալական խմբերի և շերտերի բնականոն գործունեության վրա: Պատերազը, դրան մասնակցությունը և կրած հետևանքները փոխեցին նաև երիտասարդության որոշ մասի կյանքը՝ առաջ բերելով նոր իրողություններին հարմարվելու որոշակի խնդիրներ: Մասնավորապես, հետպատերազմյան Հայաստանում երիտասարդները սոցիալ-տնտեսական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-մշակութային ոլորտներում բախվեցին մի շարք խնդիրների. ճգնաժամային հասարակությունում նրանք սոցիալական հարմարման ի՞նչ նոր պրակտիկաներ են կիրառում, դրանք ինչպես են դրսևորվել նախապատերազմյան և հետպատերազմյան Հայաստանում, ի՞նչ սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններ են ազդել այդ գործընթացների վրա: Հետպատերազմյան Հայաստանի երիտասարդների սոցիալական հարմարմանը առնչվող այս և նմանատիպ խնդիրների վերլուծությանն է նվիրված Մ. Գալստյանի ատենախոսական աշխատանքը, որի արդյունքները և դուրս բերած

եզրակացությունները մեր օրերում ունեն կարևոր արդիական նշանակություն: Այս տեսանկյունից արժանին պետք է մատուցել Մ. Գալստյանին, քանի որ նա առաջիններից մեկն է, որ երիտասարդների անկախության և սոցիալական պրակտիկաների փոխառնչության վերլուծության միջոցով Հայաստանում անդրադարձել է նրանց անկախության համաթվի մշակմանը, հայաստանյան երիտասարդների տիպաբանությանը: Մասնավորապես, երիտասարդների անկախության համաթվի չափման մեթոդաբանության և սոցիալական հարմարման պրակտիկաների փոխառնչության վերլուծության միջոցով ատենախոսը հայաստանյան երիտասարդությանը տիպաբանել է ըստ «նորարար առաջնորդների», «կայունության ջատագովների», «համակերպվողների», «հուսահատների», «ինքնահաստատվողների» տիպերի: Ատենախոսության ձեռք բերած արդյունքները մեր օրերում համարվում են կարևոր նորույթ և կարող են կիրառվել ՀՀ երիտասարդությանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում: Այն կարևոր ներդրում է երիտասարդների սոցիալական հարմարման արդյունավետության բարձրացման, երիտասարդների զբաղվածության և կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ապահովման առումով:

Ատենախոսությունում կարևորում ենք հեղինակի կողմից հիմնախնդրի ուսումնասիրության համար ճիշտ ընտրված մեթոդաբանական հիմքը՝ քանակական և որակական մեթոդի կիրառումը, այդ թվում՝ սոցիոլոգիական տվյալների երկրորդային վերլուծությունը, երիտասարդների շրջանում ստանդարտացված հարցազրույցները, ֆոկուս-խմբային քննարկումները, խորին հարցազրույցները փորձագետների և առանցքային տեղեկատուների հետ: Մեր կարծիքով, նշված հիմնախնդրի վերաբերյալ իրականացված այդ հարցազրույցները իրենցից ներկայացնում են թե՛ գիտական արժեք, թե՛ հետագա սերունդների համար բացում պատմությունների մի նոր էջ՝ ճգնաժամային իրավիճակներում հարմարվող երիտասարդության վերաբերյալ:

Ուզում ենք անդրադառնալ նաև ատենախոսության հաջողված կառուցվածքին, որը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (11 ենթագլուխ), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ներածությունում Մ. Գալստյանը հստակ ներկայացրել է ատենախոսական թեման հիմնավորող հիմնական չափորոշիչները. այն է՝ արդիականություն, նպատակ, խնդիրներ, հետազոտության օբյեկտ, առարկա, հիմնախնդրի ուսումնասիրվածության

աստիճան, գիտական նորույթ, գործնական նշանակություն, փորձաքննություն, պաշտոնական հավանություն, կառուցվածք և հիմնական բովանդակություն:

Աշխատանքի առաջին գլխում ներկայացված են ատենախոսության տեսամեթոդաբանական մոտեցումները, որտեղ, ըստ ենթագլուխների, հեղինակը անդրադառնում և բազմակողմանիորեն վերլուծում է հետպատերազմական հասարակություններն ուսումնասիրող սոցիոլոգիական տեսությունները և այդ համատեքստում երիտասարդներին առնչվող տեսական հիմնախնդիրները:

Երկրորդ գլխում, որը բաղկացած է երեք ենթագլուխներից, հեղինակը երիտասարդությանը վերլուծել է որպես սոցիոլոգիական ուսումնասիրության օբյեկտի, քննարկել այդ հասկացության ծագմանը, հիմնական մոտեցումներին, հասարակության մեջ նրա կատարած դերին և գործունեությանը, այնուհետև անդրադարձ է կատարում միջպատերազմյան և հետպատերազմյան Հայաստանի երիտասարդության ընդհանուր նկարագրին ու ժամանակագրական առումով նրանց առջև ծառացած խնդիրների փոփոխությանը: Հեղինակն այս գլխում, կատարելով պատմական ակնարկ, նշում է, որ Գրիգոր Արծրունին, Գարեգին Նժդեհը, Երվանդ Լալայանը, Ռաֆֆին հայ իրականության մեջ անդրադարձել են միջսերնդային փոխհարաբերություններին, կրթությանը և երիտասարդությանը (էջ 4, 45), սակայն այն շատ հպանցիկ է և այդ առումով ամբողջովին պարզ չի դառնում, թե նրանք ի՞նչ խնդիրներ են վեր հանել:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է սոցիալական հարմարման վերաբերյալ տեսական քննարկումներին՝ որպես սոցիոլոգիական ուսումնասիրության կարևոր հիմնախնդրի, որի վերլուծությունը տեղ է գտել երեք ենթագլուխներում: Մասնավորապես ատենախոսը ներկայացնում է հարմարման մեկնաբանման հոգեբանական, փիլիսոփայական, վարքաբանական և սոցիոլոգիական մոտեցումները, դրա սահմանման, տիպաբանության տեսական հիմքերը և կենտրոնանում է երիտասարդների սոցիալական հարմարման առանձնահատկություններին: Այս գլխում օգտակար կլինի ուշադրություն դարձնել նաև հետպատերազմյան փուլում երիտասարդների հարմարման հիմնախնդիրներով զբաղվող ոչ ֆորմալ կազմակերպությունների և նախաձեռնությունների կատարած դերին:

Չորրորդ գլխում ներկայացված են ատենախոսի կողմից իրականացրած հետազոտության արդյունքները, որոնց միջոցով դուրս են բերվել հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները:
Այս գլուխը նույնպես համարվում է հաջողված, քանի որ ատենախոսը հասարակության տարբեր ոլորտներում երիտասարդության սոցիալական հարմարման մակարդակը ուսումնասիրել է դրա խորության, կայունության, կամավորության, դեպրիվացիայի, կառուցողականության, հեռանկարների, ձևի, միջոցների համատեքստում: Այնուհանդերձ, կցանկանայինք, որ ատենախոսը կենտրոնանար և վիճակագրական տվյալների հիման վրա խորքային վերլուծության ենթարկեր ու համեմատեր մինչև պատերազմը և պատերազմից հետո Հայաստանից երիտասարդների փախուստի (արտագաղթի) միտումներն ու այն համադրել հարմարման ցուցանիշների հետ:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ միաժամանակ ունենք ևս մի քանի նկատառումներ և առաջարկություններ.

1. Ընտրանքի նկարագրության մեջ բացակայում են մարզերի և բնակավայրերի անվանումները, որտեղ անցկացվել են քանակական և որակական հարցումները: Քանակական հետազոտության մասով 104 էջում նշում է, որ յուրաքանչյուր շերտից բնակավայրի ընտրությունն իրականացվել է հավանականային ընտրանքի միջոցով: Սակայն պարզ չէ, թե շերտը որն է՝ մա՞րզը: Արդյո՞ք մարզային համամասնությունը պահված է:
2. Էջ 105 – Հեղինակը նշում է, որ կիրառվել է փորձագիտական հարցազրույց, աղյուսակ 5–ում՝ ընտրանքի նկարագրության մեջ, բացակայում է նշում այն մասին, թե որտեղ են անցկացվել փորձագիտական հարցազրույցները՝ Երևանո՞ւմ, թե՞ մարզերում:
3. Էջ 105 – Հեղինակը նշում է, որ անհատական հարցազրույցների դեպքում, որպես հավելյալ չափանիշ, կիրառվել է պատերազմին առնչությունը՝ պատերազմի մասնակից, Արցախից տեղահանված: Լավ կլիներ, որ նույն չափանիշը հաշվի առնվեր քանակական հարցման ժամանակ և նշվեր, թե հարցվողների պատահական ընտրության դեպքում քանի՞ տոկոսն են առնչվել պատերազմին և 104 էջում երիտասարդների բաշխման տվյալների մեջ սա ևս ներառեր՝ որպես

կարևոր ցուցիչ: Եվ նաև քանակական տվյալների վերլուծության ժամանակ այս խմբերին առանձին անդրադառնար:

4. Հետաքրքիր կլիներ տեսնել երիտասարդության սոցիալական հարմարման առանձնահատկությունները հետպատերազմյան փուլում՝ այլ տարիքային խմբերի հարմարման համատեքստում: Հետպատերազմյան փուլում փոփոխվել է ամբողջ հասարակության կյանքը, ուստի հնարավոր է, որ երիտասարդությունը, չնայած տարիքային առանձնահատկություններին, բախվում է նման խնդիրների, ինչ որ այլ տարիքային խմբերի ներկայացուցիչները: Այդ իմաստով օգտակար կարող էր լինել այլ հետազոտությունների երկրորդային վերլուծությունը:
5. Ատենախոսության սահմանված նպատակի ու խնդիրների շարքում նշվում է նաև համավարակի (COVID-19) վերհանման ազդեցությունը երիտասարդների սոցիալական հարմարման վրա, սակայն շարադրանքում դրա վերլուծությանը անդրադարձ է կատարվում հպանցիկ:
6. Օգտագործված գրականության ցանկում մի շարք միավորների հրատարակչությունները, գրքերի էջերը, ինչպես նաև պահանջվող այլ տվյալներ նշված չեն: Օրինակ՝ 12-րդ միավորում (Լալայան Ե., Ծիսական կարգերը հայոց մեջ, Թ., տպ. Ն. Աղանեանի, 1913) նշված չէ, թե ուսումնասիրությունն «Ազգագրական հանդէս»-ի որ հատորում է հրատարակվել, բացակայում են նաև ուսումնասիրության էջերը: Այս միավորն օգտագործված չէ նաև ատենախոսության մեջ: 13-րդ միավորում (Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925) բացակայում են հրատարակչության վայրը և գրքի էջերը:

Ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, և դրանք առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների համար:

Ատենախոսի հրատարակած աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հեղինակի հիմնական ձեռքբերումները:

Եզրակացություն

Մարինա Կարենի Գալստյանի «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան Հայաստանում» ԻԲ.00.01 - սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, ունի շատ կարևոր գործնական նշանակություն, և եզրահանգումները կարող են գիտական հիմք հանդիսանալ հետպատերազմյան Հայաստանի երիտասարդության սոցիալական հարմարման կիրառական խնդիրների լուծմանը:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները, ուստի միջնորդում ենք Մասնագիտական խորհրդին Մարինա Կարենի Գալստյանին շնորհել սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ԻԲ.00.01- «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
սոցիալական գործընթացների և ինստիտուտների
մարդաբանության բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր
Միհրան Վարդգեսի Գալստյան

10.09.2024թ.